ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» դեկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-11/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2016թ. թիվ 1/73-3/1329-16 և 01.02.2016թ. թիվ 1/73-3/2825-16 գրություններով ներկայացված «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00886056) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, 20.01.2016թ. թիվ 1/73-3/1329-16 և 01.02.2016թ. թիվ 1/73-3/2825-16 գրություններով, դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը

և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

Վերոհիշյալ գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 28.12.2015թ. թիվ 15/144 և 18.01.2016թ. թիվ 16/03 և ՀՀ պաշտպանության նախարարության 26.01.2016թ. թիվ ԴՎԱ/173 գրությունները և կից փաստաթղթերի պատճենները:

2. «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 21.01.2016թ. թիվ 01/04.1/125-16 և 03.02.2016թ. թիվ 01/04.1/268-16 գրություններով դիմել է «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին:

«Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն 12.02.2016թ. գրությամբ ներկայացրել է իր առարկությունները և միևնույն ժամանակ հայտնել, որ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն չի խախտել ընթացակարգերի հրավերով նախատեսված կարգը և չի կարող ընդգրկվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

3. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը 28.12.2015թ. թիվ 15/144 և 18.01.2016թ. թիվ 16/03 գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել է «ԵՔԿԱ-ՇՀԱՊՁԲ-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 1) վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով վերջինս հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան 23.12.2015թ. ստացվել է եզրակացություն, որի համաձայն՝ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի

գնային առաջարկը գերազանցել է հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը:

4. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 26.01.2016թ. թիվ ԴՎԱ/173 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ 2) վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միևնույն ժամանակ, Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման նպատակով վերջինս հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարությանը, որին ի պատասխան ստացվել է եզրակացություն, որի համաձայն՝ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցել է հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը:

<u>5. ՍՑ-ԳԲԽ-11/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2016թ. թիվ 1/73-3/1329-16 և 01.02.2016թ. թիվ 1/73-3/2825-16 գրություններով ներկայացված «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՔԿԱ-ՇՀԱՊՁԲ-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ

• «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔԿԱ-ՇՀԱՊՁԲ-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***11.12.2015թ.*** հայտ է ներկայացրել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն:

• Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածի «ա» կետով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

• Ընկերությունը հայտի N 4 հավելվածով՝ համապատասխան չափաբաժիններով առավելագույն գնային առաջարկը կազմել է 52 123 000 ՀՀ դրամ:

• Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 17.12.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

• Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.12.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելուն (11.12.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը կազմել է 48 310 780 ՀՀ դրամ:***

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի վերաբերյալ

• ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տնտեսական, սանիտարական և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***03.11.2015թ.*** հայտ է ներկայացրել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն:

• Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածի «ա» կետով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

• Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը թվով 3 չափաբաժինների համար կազմել է՝ 50 383 422 ՀՀ դրամ (1-

ին չափաբաժին՝ 49 347 422 ՀՀ դրամ), (4-րդ չափաբաժին՝ 842 000 ՀՀ դրամ), (5-րդ չափաբաժին՝ 194 000 ՀՀ դրամ):

- Պատվիրատուն, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, տվյալների ճշտման մասին 10.11.2015թ. կատարած հարցմամբ խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ:
- Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.11.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելուն (03.11.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը կազմել է 48 310 780 ՀՀ դրամ:***

6. ՍՑ-ԳԲԽ-11/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2016թ. թիվ 1/73-3/1329-16 և 01.02.2016թ. թիվ 1/73-3/2825-16 գրությունները, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 28.12.2015թ. թիվ 15/144 և 18.01.2016թ. թիվ 16/03 և ՀՀ պաշտպանության նախարարության 26.01.2016թ. թիվ ԴՎԱ/173 գրությունները և կից փաստաթղթերի պատճենները, «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի 12.02.2016թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: ***Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ***գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցմանն ի պատասխան տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ

իր կողմից ***հայտը ներկայացվելուն նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔԿԱ-ՇՀԱՊՁԲ-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***11.12.2015թ.*** հայտ է ներկայացրել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի N 3.4 հավելվածի «ա» կետով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Ընկերությունը հայտի N 4 հավելվածով՝ համապատասխան չափաբաժիններով առավելագույն գնային առաջարկը կազմել է ***52 123 000 ՀՀ դրամ***:

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 23.12.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելուն (11.12.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը կազմել է 48 310 780 ՀՀ դրամ, այսինքն՝ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցել է հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը:***

Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տնտեսական, սանիհիգենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***03.11.2015թ.*** հայտ է ներկայացրել «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածի «ա» կետով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը թվով 3 չափաբաժինների համար կազմել է՝ 50 383 422 ՀՀ դրամ (1-ին չափաբաժին՝ ***49 347 422 ՀՀ դրամ***), (4-րդ չափաբաժին՝ 842 000 ՀՀ դրամ), (5-րդ չափաբաժին՝ 194 000 ՀՀ դրամ):

Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.11.2015թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ն ***հայտը ներկայացնելուն (03.11.2015թ.) նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը կազմել է 48 310 780 ՀՀ դրամ, այսինքն տվյալ դեպքում ևս «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի գնային առաջարկը գերազանցել է հայտը ներկայացնելուն նախորդող երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը:***

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ի կողմից 03.11.2015թ. հայտի N 3.3 և 11.12.2015թ. N 3.4 հավելվածներով ներկայացված հայտարարությունները հանդիսանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում:

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն** են՝

- *նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,*
- *խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գնման գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:*

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և Ընկերությանը ***վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում վերջինս մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ,*** քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Կենտրոնն արձանագրում է, որ «Մակրո Ֆուդ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը ***03.11.2015թ.*** մասնակցելով ՀՀ

պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/69» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և ***11.12.2015թ.*** կրկին հայտ է ներկայացրել «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔԿԱ-ՇՀԱՊՁԲ-16/01» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որի շրջանակներում ևս ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ ***6 ամիս ժամկետով,*** եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ ***որակավորման չափանիշները*** կամ տեխնիկական բնութագրերը ***որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող***:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Կենտրոնը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2016թ. թիվ 1/73-3/1329-16 և 01.02.2016թ. թիվ 1/73-3/2825-16 գրություններով ներկայացված «Մակրո ֆուդ» ՍՊԸ-ին

(ՀՎՀՀ՝ 00886056) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-11/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան